

Համարը N 1069-Ն
Տիպը Որոշում
Մկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2013.10.16/57(997)
Հոդ. 950

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 17.10.2013

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 03.10.2013
Ստորագրման ամսաթիվը 07.10.2013
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հոկտեմբերի 2013 թվականի N 1069-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 4 հավելվածում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1616-Ն որոշման N 1 հավելվածում կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

1) վաղաժամկետ մարել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետությանը պետական վարկ տրամադրելու մասին» 2009 թվականի մայիսի 20-ին ստորագրված համաձայնագրի շրջանակներում տրամադրված վարկի մայր գումարի գծով առկա պարտքի մնացորդը և մինչև վաղաժամկետ մարման ամսաթիվը հաշվարկված տոկոսավճարները.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի անվամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացել արտաբյուջետային բանկային հաշիվ՝ բյուջետային վարկերի տրամադրման, մարվող գումարների մուտքագրման և նոր վարկերի տրամադրման գործառնություններն առանց նախահաշվի սպասարկելու նպատակով՝

հաշվի մուտքերն ու ելքերը սահմանված կարգով արտացոլելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններում.

3) Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարկերի և փոխատվությունների տրամադրում» հոդվածով)

ա. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրել 8,000,000.0 հազ. դրամ բյուջետային վարկ՝ տարեկան 6.25 տոկոս տոկոսադրույքով, մինչև 2020 թվականի սեպտեմբերի 15-ը մարման ժամկետով, առանց գրավի, վարկի հիմնական գումարը վարկի մարման վերջնաժամկետում միանվագ մարելու, իսկ հաշվարկվող տոկոսները յուրաքանչյուր օրացուցային տարվա մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին՝ սկսած 2014 թվականի մարտի 15-ից մարելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ կնքելով համապատասխան պայմանագիր,

բ. «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը տնտեսության զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով տրամադրել 3,900,000.0 հազ. դրամ բյուջետային վարկ, մինչև 2026 թվականի սեպտեմբերի 15-ը մարման ժամկետով, տարեկան 7 տոկոս տոկոսադրույքով, վարկի հիմնական գումարը վարկի մարման վերջնաժամկետում միանվագ մարելու, իսկ հաշվարկվող տոկոսները յուրաքանչյուր օրացուցային տարվա մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին՝ սկսած 2014 թվականի մարտի 15-ից մարելու պայմանով: «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության հետ կնքել համապատասխան վարկային պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության նկատմամբ վարկառուի վարկային պարտավորության ապահովման նպատակով կիրառվում է շահառուների նկատմամբ ենթավարկի պահանջի իրավունքի (ներառյալ ապահովման միջոցի նկատմամբ վարկառուի իրավունքը) գրավադրում, ընդ որում, 50 մլն դրամ և ավելի ենթավարկերի դեպքում գրավադրումը կատարվում է նախքան ենթավարկի տրամադրումը, իսկ մինչև 50 մլն դրամ կազմող ենթավարկերի դեպքում վարկառուն պարտավոր է գրավադրումը կատարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պահանջի դեպքում, եթե ծրագրի ընթացքում վարկառուի ֆինանսական վիճակը վատթարանում է.

գ. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին հատկացնել մինչև 24,660,0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ գումարի չափով բյուջետային վարկ, 6 տարի մարման ժամկետով, տարեկան 7,5 տոկոս տոկոսադրույքով, առանց պարտավորությունների կատարման ապահովման միջոցի, վարկի հիմնական գումարն սկսած 2016 թվականի հունվարի 1-ից հավասարաչափ եռամսյակային մարումներով, իսկ հաշվարկվող տոկոսներն սկսած 2014 թվականի հունվարի 1-ից եռամսյակային մարումներով իրականացնելու պայմանով.

4) «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից հատկացնել 1,950,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում» հոդվածով):

(2-րդ կետը փոփ., լրաց 17.10.13 N 1126-Ն, փոփ. 07.11.13 N 1243-Ն, 12.12.13 N 1375-Ն, 26.12.13

N 1517-Ն, 18.06.15 N 679-Ն)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2013 թ. հոկտեմբերի 7
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1069-Ն որոշման

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 4 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի
N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ**

(հազ. դրամ)

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (մուտքերի ավելացումը նշված է դրական նշանով, իսկ ելքերի ավելացումը՝ փակագծերում)
1	տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	2
Ա. Ներքին աղբյուրներ - ընդամենը	(101,213,461.2)
այդ թվում՝	
1. Փոխառու զուտ միջոցներ	(10,000,000.0)
այդ թվում՝	
1.1. Արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) թողարկումից և տեղաբաշխումից զուտ մուտքեր	(10,000,000.0)
ՀՀ ֆինանսների նախարարություն	(10,000,000.0)
որից՝	
զանձապետական պարտատոմսեր	(10,000,000.0)
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	(91,213,461.2)
այդ թվում՝	
2.4. Վարկերի և փոխատվությունների տրամադրում	(64,728,000.0)

է) ՀՀ կենտրոնական բանկ	(60,828,000.0)
ը) «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ	(3,900,000.0)
2.6. Այլ	(24,535,461.2)
կայունացման դեպոզիտային հաշվի համալրում	(24,535,461.2)
2.2. Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(1,950,000.0)
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	(1,950,000.0)
որից՝	
«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կապիտալում ներդրում	(1,950,000.0)
Բ. Արտաքին աղբյուրներ - ընդամենը	101,213,461.2
այդ թվում՝	
1. Փոխառու զուտ միջոցներ	101,213,461.2
այդ թվում՝	
1.2. Ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(178,676,442.8)
ՀՀ ֆինանսների նախարարություն	(178,676,442.8)
1.3. Արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) թողարկումից և տեղաբաշխումից զուտ մուտքեր	279,889,904.0
ՀՀ ֆինանսների նախարարություն	279,889,904.0
որից՝	
արտարժույթով պետական պարտատոմսեր	279,889,904.0

(*հավելվածը փոփ. 07.11.13 N 1243- Ն, 26.12.13 N 1517- Ն*)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Համարը N 717-Ս

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը Չի հրապարակվել

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 04.07.2009

Տեսակը Ինկորպորացիա

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 26.06.2009

Ստորագրման ամսաթիվը 03.07.2009

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

✚ Կապեր այլ փաստաթղթերի հետ

✚ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2009 թվականի N 717-Ս

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությանը Ռուսաստանի Դաշնության կողմից 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից տնտեսության վարկային պահանջարկը բավարարելու նպատակով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից տնտեսության կայունացման վարկավորման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ 10-օրյա ժամկետում՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի անվամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացել արտաբյուջետային բանկային հաշիվ՝ ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում բյուջետային վարկերի տրամադրման, մարվող գումարների մուտքագրման և նոր վարկերի տրամադրման գործառնություններն առանց նախահաշվի սպասարկելու նպատակով, հաշվի մուտքերն ու ելքերը սահմանված կարգով արտացոլելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններում.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ կնքել գործակալության պայմանագիր ծրագրի 1-ին բաղադրիչի իրականացման մասին.

3) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն որոշման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեից (կայունացման դեպոզիտային հաշվի միջոցներից) 2009 թվականի երրորդ եռամսյակում՝

1) ծրագրի 1-ին բաղադրիչի ֆինանսավորման նպատակով սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված արտաբյուջետային հաշվին հատկացնել 60,5 մլրդ դրամ.

2) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 1 մլրդ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին որպես հիմնադրի գույքային ներդրում տրամադրելու համար՝ հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով.

3) «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին հատկացնել 3,7 մլրդ դրամ բյուջետային վարկ՝ բյուջետային էլքերի տնտեսագիտական դասակարգման «Վարկերի և փոխատվությունների տրամադրում» հոդվածով, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով, 10 տարի մարման ժամկետով, տարեկան Լիբոր + 4 տոկոս տոկոսադրույքով, սկսած 2009 թվականի դեկտեմբերի 10-ից վարկի հիմնական գումարի և տոկոսների կիսամյակային մարման պայմանով.

4) «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը հատկացնել 6,4 մլրդ դրամ բյուջետային վարկ՝ բյուջետային էլքերի տնտեսագիտական դասակարգման «Վարկերի և փոխատվությունների տրամադրում» հոդվածով, ծրագրի 2-րդ բաղադրիչի իրականացման համար:

(3-րդ կետը լրաց. 09.07.09 N 747- Ն)

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Տ. Սարգսյան

2009 թ. հուլիսի 3
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 26-ի N 717-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ

Սույն ծրագիրը նպատակ ունի խթանել համախառն ներքին արդյունքի աճը՝ ֆինանսական ճգնաժամի պայմաններում տնտեսավարող սուբյեկտների վարկային պահանջարկը մասնակի բավարարելու միջոցով:

Ծրագրի գումարը՝ 101.5 մլրդ դրամ:

Ֆինանսավորման ձևը՝ բյուջետային վարկեր:

Վարկառուներ՝ ըստ Ծրագրի բաղադրիչների:

Ծրագրի ժամկետը՝ 10 տարի, բացառությամբ սույն ծրագրի «Բաղադրիչ 2.»-ի:

(պարբերությունը լրաց. 18.06.15 N 706- Ա)

Տրամադրման կարգը՝ միանվագ կամ վարկային գիծ:

Տարեկան տոկոսադրույքը՝ ըստ Ծրագրի բաղադրիչների:

Հիմնական գումարը վերադարձվում է ոչ ուշ սկսած 3-րդ տարվանից, հավասարաչափ կիսամյակային մարումներով, յուրաքանչյուր օրացուցային տարվա դեկտեմբերի 10-ին և հունիսի 10-ին՝ բացառությամբ սույն ծրագրի «Բաղադրիչ 2»-ի:

Տոկոսները վճարվում են կիսամյակային մարումով, յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 10-ին և դեկտեմբերի 10-ին, սկսած 2009 թվականի դեկտեմբերի 10-ից:

Բաղադրիչ 1. Ֆինանսաբանկային համակարգի վարկավորում

Այս բաղադրիչի վարկառուներն են բանկերը և վարկային կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից որոշված ուղղություններով շահառուներին ենթավարկեր տրամադրելու համար:

Հաշվարկները՝ դրամով:

Բաղադրիչի ֆինանսական հատկացման չափը կազմում է 74.0 մլրդ դրամին համարժեք ԱՄՆ-ի դոլար, հետևյալ հիմնական ուղղություններով՝

հիպոթեքային շուկա՝ 12 մլրդ դրամ,

արտահանում խթանող, մթերոդ-վերամշակող, օդային փոխադրումներ, ենթակառուցվածքներ ապահովող տուրիզմ, սպառողական վարկավորում, ավտովարկավորում, բնակարանների և անհատական բնակելի տների վերանորոգման և վերակառուցման վարկավորում՝ 30 մլրդ դրամ,

փոքր և միջին ձեռներեցություն՝ 18,5 մլրդ դրամ,

«Համակարգիչ՝ բոլորի համար» ծրագիր՝ 1.0 մլրդ դրամ,

Գյուղատնտեսական վարկեր՝ 12.5 մլրդ դրամ:

Տարեկան տոկոսադրույքը որոշվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ որից ԱՄՆ դոլարով 6 ամսյա դեպոզիտների համար Լիբոր + 4 տոկոսը գերազանցող մասը գործակալության վարձատրությունն է:

Վարկի օգտագործման ժամկետը մինչև 10 տարի: Բանկերի և կազմակերպությունների կողմից մարված հիմնական գումարներից ընթացիկ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով սահմանված բյուջետային մուտքերի գումարների հաշվարկներում ընդունված վարկի մարման չափը գերազանցող գումարների հաշվին ֆինանսավորվում են նոր վարկեր՝ մինչև Ծրագրի ժամկետի ավարտը մարման ժամկետով: Նոր վարկերի տրամադրման համար ֆինանսական հատկացումներն իրականացվում են ըստ սահմանված հիմնական ուղղությունների և ծավալների. ընդ որում, ծավալները կարող են փոփոխվել՝ ելնելով տվյալ ուղղություններով շուկայում առկա պահանջից, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կատարված գնահատման հիման վրա:

Ծրագրի այս բաղադրիչը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնարկ հանդիսացող «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ»-ի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ կնքված գործակալության պայմանագրի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից որոշված չափանիշներին և ընթացակարգերին համապատասխան ընտրված մասնակից ֆինանսական հաստությունների հետ վարկային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անունից կնքում է գործակալը:

Վարկային պայմանագրի շրջանակերում մասնակից ֆինանսական հաստությունների գործունեության դիտարկումը, հաշվետվությունների ստացումը, վերլուծությունը և վարկի վաղակետ հետ վերադարձման պարտատիրոջը վերապահված լիազորությունները իրականացնում է գործակալը:

Վարկային միջոցների հատկացման, վերադարձման, տոկոսների ու տուժանքի վճարման

գործառնությունները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը արտացոլում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման հաշվետվության մեջ, ըստ գործակալի կողմից կենտրոնական գանձապետարան ներկայացվող հաշվետվությունների:

Բաղադրիչ 2. Տնտեսության ֆինանսավորում

(վերնագիրը խմբ. 18.06.15 N 706- Ա)

Բաղադրիչի վարկառուն է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված, լիցենզավորված ունիվերսալ վարկային կազմակերպությունը՝ շահառուներին ֆինանսավորելու համար:

(պարբերությունը խմբ. 18.06.15 N 706- Ա)

Հաշվարկները՝ դրամով:

Բաղադրիչի ֆինանսական հատկացման չափը կազմում է 6,4 մլրդ դրամ:

Վարկի մարման ժամկետը՝ 17 տարի:

(պարբերությունը փուլ. 18.06.15 N 706- Ա)

Տարեկան տոկոսադրույքը՝ հաստատուն 7 տոկոս:

Հիմնական գումարը վերադարձվում է սկսած 2014 թվականի հունիսի 10-ից, հավասարաչափ կիսամյակային մարումներով, յուրաքանչյուր օրացուցային տարվա դեկտեմբերի 10-ին և հունիսի 10-ին: 2015 թվականին հիմնական գումարը վերադարձվում է հունիսի 10-ին և դեկտեմբերի 10-ին՝ 2014 թվականին համապատասխանաբար մարված հիմնական գումարների չափով, իսկ 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հիմնական գումարի մնացորդը, որը կկազմի 3,883 մլրդ դրամ, վերադարձվում է վարկի մարման վերջնաժամկետում՝ միանվագ:

(պարբերությունը լրաց. 18.06.15 N 706- Ա)

Նախարարության նկատմամբ վարկառուի վարկային պարտավորության ապահովման նպատակով կիրառվում է շահառուների նկատմամբ ենթավարկի պահանջի իրավունքի (ներառյալ ապահովման միջոցի նկատմամբ վարկառուի իրավունքը) գրավադրում, ընդ որում 50 մլն դրամ և ավելի ենթավարկերի դեպքում գրավադրումը կատարվում է նախքան ենթավարկի տրամադրումը, իսկ մինչև 50 մլն դրամ կազմող ենթավարկերի դեպքում վարկառուն պարտավոր է գրավադրումը կատարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պահանջի դեպքում՝ եթե ծրագրի ընթացքում վարկառուի ֆինանսական վիճակը վատթարանում է:

Բաղադրիչ 3. Համակարգաստեղծ կամ խոշոր ենթակառուցվածքների գործունեություն ապահովող տնտեսավորող սուբյեկտների վարկավորում

Բաղադրիչն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առանձին որոշումներով նախատեսված վարկառուներին, համապատասխան որոշմամբ կատարված հատկացումներով և սահմանված պայմաններով:

Բաղադրիչի ֆինանսական հատկացման չափը կազմում է 21,1 մլրդ դրամ:

(հավելվածը փուլ. 08.07.10 N 860- Ա, փուլ., լրաց. 20.01.11 N 26- Ա, 28.07.11 N 1042- Ն, փուլ. 29.03.12 N 361- Ա, 12.07.12 N 833- Ա, փուլ., լրաց. խմբ. 18.06.15 N 706- Ա)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**